Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թ.
օգոստոսի 9-ի նիստի N 32
արձանագրային որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱԼԻԱՏԻՎ (ԱՄՈՔԻՉ) ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Համակատարող	Կատարման ժամկետ	Ակնկալվող արդյունքը
Բաղադրիչ 1. Օրենսդրության վերանայում և նորմատիվ-իրավական դաշտի ապահովում				
Բաղադրիչի իրականացմանն ուղղված գործողություններ՝				
1) «Պալիատիվ բժշկական օգնություն» հասկացության օրենսդրական սահմանում՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում կամ «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագծում	ՀՀ առողջապահության նախարարություն		2012-2013 թվականներ	«Պալիատիվ բժշկական օգնություն՞ հասկացությունը ամրագրված է ՀՀ օրենսդրության մեջ
2) «Հայաստանի Հանրապետությունում պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ներդրման 2013-2018 թվականների ազգային ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը ու ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2012-2013 թվականներ	Պալիատիվ բժշկական օգնության ներդրման ազգային ռազմավարությունը մշակված է
3) Որպես բժշկական օգնության և սպասարկման տեսակ պալիատիվ	ՀՀ առողջապահության	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի		պալիատիվ օգնության լիցենզավորման համար

օգնության լիցենզավորման համար անհրաժեշտ ընթացակարգի և տեխնիկական ու մասնագիտական որոկավորման պահանջների վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների կատարում	նախարարություն	նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2012-2013 թվականներ	անհրաժեշտ ընթացակարգի և տեխնիկական ու մասնագիտական որոկավորման պահանջները վերանայված և սահմանված են
4) Իրավական ակտերի մշակում և գործող իրավական ակտերի վերանայում	ՀՀ առողջապահության նախարարություն		2012-2014 թվականներ	ա.գործող իրավական ակտերը վերանայված են
Բաղադրիչ 2. Առողջապահական կարիքների գնահատում				
Բաղադրիչի իրականացմանն ուղղված գործողություններ՝				
1) Պալիատիվ բուժօգնության մոդելի որոշում և ներդրման համար կարողությունների ապահովման ժամանակացույցի կազմում	ՀՀ առողջապահության նախարարություն	Միջազգային և հասարակական Կազմակերպություններ (համաձայնությամբ)	2012-2013 թվականներ	Պալիատիվ բժշկական օգնության մոդելը որոշված է և ժամանակացույցը կազմված է
ա. Բուժհաստատություններում պալիատիվ բուժօգնության ներդրման հնարավորությունների գնահատման նպատակով պիլոտային ծրագրի(երի) մշակում և գործադրում	ՀՀ առողջապահության նախարարություն		2012 թվական	Պիլոտային ծրագիրը(երը) մշակված և գործադրված են
բ. Պիլոտային ծրագրի արդյունքների վերլուծություն, ներդրման հետագա գործողությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2013 թվական	Պիլոտային ծրագրի արդյունքները վերլուծված են և հետագա ներդրման վերաբերյալ առկա են առաջարկություններ
2) Բուժօգնության տարբեր մակարդակներում պալիատիվ բուժօգնություն իրականացնող կառույցների, մեխանիզմների /ընթացակարգի և պատասխանատուների դերի հստակեցում և տեղեկատավական համակարգերի ուժեղացում				
ա. Պալիատիվ բուժօգնության ոլորտի մասնագետների և բուժօգնության ծավալի և աշխատանքի նկարագրի մշակում և հաստատում	ՀՀ առողջապահության նախարարություն		2012-2014 թվականներ	Աշխատանքի նկարագրերը մշակված են
բ. Պալիատիվ բուժօգնության ոլորտում առողջապահական տվյալների հավաքագրման համակարգերի	ՀՀ առողջապահության նախարարություն		2012-2014 թվականներ	Պալիատիվ բուժօգնության ոլորտում տվյալների հավաքագրման համակարգը

ստեղծում				ստեղծված է
3) Պալիատիվ բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում				
ա.Պալիատիվ բուժօգնության ֆինանսավորման մեխանիզմների հնարավորության դիտարկում	ՀՀ առողջապահության նախարարություն		2012-2014 թվականներ	Ֆինանսական մեխանիզմները վերլուծված են
բ. Պալիատիվ բուժօգնության ծավալների իրականացման դիտարկում՝ պետական նպատակային ծրագրի շրջանակներում	ՀՀ առողջապահության նախարարություն		2013-2015 թվականներ	Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում պալիատիվ բուժօգնության ծավալները ապահովված են
գ. Հայաստանում պալիատիվ բուժօգնության մեթոդական ձեռնարկների մշակում	ՀՀ առողջապահության նախարարություն		2013-2014 թվականներ	Պալիատիվ բուժօգնության մեթոդական ձեռնարկները մշակված են
Բաղադրիչ 3. Դեղորայքային հասանելիության ապահովման կարիքների գնահատում				
Բաղադրիչի իրականացմանն ուղղված միջոցառումներ՝				
1) Դեղերի շրջանառության ոլորտում առկա ենթաօրենսդրական ակտերի վերանայում և համապատասխանեցում	ՀՀ առողջապահության նախարարություն		2012-2013 թվականներ	Դեղերի շրջանառության ոլորտը կանոնակարգող ենթաօրենսդրական ակտերը վերանայված են
Բաղադրիչ 4. Պալիատիվ բժշկական օգնության ներդրման համար անրաժեշտ կրթական ծրագրերի և կադրերով ապահովվածության կարիքների գնահատում				
Բաղադրիչի իրականացմանն ուղղված միջոցառումներ՝				
1) Պալիատիվ օգնության վերաբերյալ բուհական և հետբուհական օրինակելի կրթական ծրագրերի մշակում և հաստատում բժիշկների և միջին բուժանձնակազմի համար	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	2012-2014 թվականներ	Պալիատիվ բուժօգնությանը վերաբերող բուհական և հետբուհական կրթական ծրագրերը բժիշկների և միջին բուժանձնակազմի համար մշակված են
1) Տարբեր մակարդակների բուժհաստատություններում պալիատիվ բուժօգնության մասնագետներով հագեցվածության ապահովում				
ա.Պալիատիվ մասնագիտությունով կլինիկական օրդինատուրաների համակարգի ներդրում՝ միջազգային պահանջներին համապատասխան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	2015 թվական	Պալիատիվ մասնագիտության կլինիկական օրդինատուրաների համակարգը ներդրված է
բ. Պալիատիվ բուժօգնության	ՀՀ կրթության և	ՀՀ առողջապահության		Պալիատիվ բուժօգնության

մասնագետների որակավորման նպատակային ծրագրի մշակում և ներդրում	գիտության նախարարություն	նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2015-2016 թվական	մասնագետների որակավորման նպատակային ծրագրերը մշակված են
Բաղադրիչ 5. Հանրային իրազեկում և քարոզչություն				
աղադրիչի իրականացմանն ուղղված միջոցառումներ՝				
1) Զանգվածային լրատվության, տեսահոլովակների, բուկլետների, գովազդի և բոլոր հնարավոր այլ միջոցներով պալիատիվ բժշկական օգնության հարցերի վերաբերյալ հանրության իրազեկում և քարոզչություն, ներառելով նաև հետևյալ թիրախային խմբերը. ա. որոշում կայացնողներ, բ. բուժաշխատողներ, գ. բնակչություն	ՀՀ առողջապահության նախարարություն	Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2012-2013 թվականներ	Պալիատիվ բժշկական օգնության վերաբերյալ իրազեկման աշխատանքները իրականացված են, այդ թվում որոշում կայացնողների, բնակչության, բուժաշխատողների շրջանում
2) Պալիատիվ բժշկական օգնության հարցերով համագործակցություն միջազգային, միջոլորտային և հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ	ՀՀ առողջապահության նախարարություն		2012-2015 թվականներ	Համագործակցությունը կայացած է